ԱՄԵՐԻԿՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

29-ը հոկտեմբերի, 2014թ.

Լոռու մարզպետ
Արթուր Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Ամերիկյան խորհուրդներ կազմակերպությունն 2014թ-ին կրկին իրականացնելու է օրենսդիր եւ օրինաստեղծ մարմինների աշխատակիցների մասնագիտական կատարելագործմանը և փոխանակմանն ուղղված (Professional Fellows Program/PFP), որի մասին Ձեզ նամակով տեղեկացրել էինք անցյալ տարի: Այս ծրագիրը հնարավորություն է ընձեռում օրենսդրական մարմինների աշխատակիցներին մեկնել ԱՄՆ՝ ուսումնասիրելու ամերիկյան օրենսդրական հաստատությունների և կառույցների փորձը: ԱՄՆ այցից հետո ծրագրի՝ ԱՄՆ-ի կողմի մասնակիցները նույնպես հնարավորություն են ունենում փոխադարձ այցեր կատարելու իրենց գործընկերների երկրները:

Նամակին կից Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում PFP ծրագրի համառոտ նկարագրությունը: Երախտապարտ կլինեմ, եթե Ձեր աշխատակիցները նամակին կից ներկայացված ծրագրի համառոտ նկարագրությունը եւ ծրագրի վերաբերյալ տեղեկությունները հասանելի դարձնեն Լոռու մարզպետարանի աշխատակազմին, ինչպես նաեւ մարզի օրենսդրական հաստատությունների եւ տեղական կառավարման մարմնների մասնագետներին: Խնդրում եմ, որպեսզի ծրագրի հայտարարությունը ուղարկվի նաեւ ձեր էլեկտրոնային ներքին ցանցով: Համաձայնության դեպքում կարող ենք տրամադրել հայտարարության էլեկտրոնային տարբերակը: Ուրախ կլինենք պատասխանել PFP ծրագրին վերաբերող Ձեր բոլոր հարցերին:

Հետագա համագործակցության ակնկալիքով եւ հարգանքով՝

Քերին Սմիթ
Հայաստանյան գրասենյակի տնօրեն

ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ, 0010, ԱՄԻՐՅԱՆ ՓՈՂՈՑ 4/7, ԻՄՊԵՐԻՈՒՄ ՊԼԱԶԱ ԲԻԶՆԵՍ ԿԵՆՏՐՈՆ, 5-ՐԴ ՀԱՐԿ
+374 (0) 10 544012, 544015, 560045 www.americancouncils.am

AMERICAN COUNCILS
FOR INTERNATIONAL EDUCATION ACTR ACCELS

Օրենսդրական ոլորտի մասնագետների (Professional Fellows Program/PFP) ծրագիրը հովանավորում է ԱՄՆ-ի Պետքարտուղարության կրթական եւ մշակութային գործերի բաժինը: Հայաստանում PFP ծրագիրն իրականացնում է Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդներ (Ամերիկյան խորհուրդներ) կազմակերպությունը:

Ամերիկյան խորհուրդների գրասենյակը հրավիրում է օրենսդրական ոլորտի երիտասարդ մասնագետներին ներկայացնելու օնլայն դիմումի հայտ մինչեւ 2014թ. դեկտեմբերի 1-ը:

PFP-ն հնարավորություն է ընձեռում խոստումնալից երիտասարդ մասնագետներին ծանոթանալու եւ գործնական փորձ ձեռք բերելու ԱՄՆ-ի կառավարական մարմիններում: PFP-ն ներգրավում է մասնագետների, ովքեր աշխատելով պետական մարմիններում, քաղաքացիական, կրթության հաստատություններում, քաղաքացիների շահերի պաշտպանության կազմակերպություններում՝ ակտիվ ընգրկված են օրենսդրական եւ/կամ քաղաքականության մշակման գործընթացում: Ծրագրի մասնակիցները կլինեն PFP-ի ավելի լայն խմբի մաս, միանալով այլ երկրների մասնակիցներին: PFP մասնակիցները ԱՄՆ-ի քաղաքական գործընթացների վերաբերյալ իրենց մասնագիտական հետաքրքրություններն ու գիտելիքները կկարողանան խորացնել՝ հնարավորություն ունենալով աշխատելու Միացյալ Նահանգների պետական օրենսդրական մարմիններում, քաղաքապետարաններում, ինչպես նաեւ ԱՄՆ-ի Կոնգրեսում եւ քաղաքականության մշակման հարցերով զբաղվող ՀԿ-ներում:

PFP-ի նպատակն է մասնակիցներին հնարավորություն տալ՝

- ավելի խորը ծանոթանալու ԱՄՆ-ի օրենսդրական գործընթացներին,
- կարեւորելու քաղաքացիական հասարակության դերը եւ ներգրավվածությունը քաղաքական գործընթացներին,
- ստեղծելու գործընկերական կապեր ԱՄՆ-ի եւ Հայաստանի հաստատությունների միջեւ,
- միասնական ուղիներ փնտրելու եւ գործնական լուծումներ մշակելու ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները հաղթահարելու համար:

PFP ծրագրի յուրաքանչյուր մասնակից հինգից վեց շաբաթյա վերապատրաստում կանցնի ԱՄՆ-ում: Ծրագրի նախնական ժամանակացույցի համաձայն 2015թ. գարնան ծրագրի մասնակիցներն ԱՄՆ-ում կլինեն ապրիլ-մայիս ամիսներին: PFP ծրագիրը տրամադրում է ճանապարհածախս, վիզայի վճար, առողջության ապահովագրում եւ կրթաթոշակ: Բնակարանը եւ սնունդը տրամադրում են նախապես ընտրված հյուրընկալող ընտանիքները:

Ծրագրին մասնակցելու համար դիմորդները պետք է՝

- լինեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի եւ բնակիչ
- դիմելու պահին լինեն 25-ից 35 տարեկան
- ունենան առնվազն բակալավրի կամ ավելի բարձր աստիճան
- ցուցաբերեն առաջնորդելու եւ համագործակցելու հմտություններ:
- ունենան համապատասխան աշխատանքային փորձ եւ մտադրություն աշխատանքը շարունակելու իրենց երկրի պետական եւ հասարակական սեկտորում
- տիրապետեն անգլերենին: PFP մրցույթի առաջին փուլն անցնելու դեպքում մասնակիցների համար կանցկացվի TOEFL թեստ, եթե դիմորդը նախկինում չի հանձնել եւ չի կարող ներկայացնել TOEFL-ի (paper based) 500 միավորից բարձր կամ IBT TOEFL-ի 60 միավորից բարձր թեստի կամ դրանց համարժեք անգլերենի այլ թեստերի (օրինակ IELTS թեստի 6 միավորին) արդյունքները:

PFP ծրագրի մասնակիցներն ընտրվում են մրցութային կարգով:

Ծրագրին մասնակցելու համար դիմորդները պետք է մինչև 2014թ. դեկտեմբերի 1-ը ներկայացնեն օնլայն դիմում՝ https://ais.americancouncils.org/pfp

Ծրագրին դիմելու գործընթացի եւ մրցույթի անցկացման մասին մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ PFP ծրագրի վեբ կայքից http://professionalfellows.americancouncils.org/ կամ կարող եք դիմել Ամերիկյան խորհուրդների հայաստանյան գրասենյակ PFP ծրագրի պատասխանատու Նանե Աբրահամյանին ստորեւ նշված հասցեով կամ pfp@americancouncils.am էլ-փոստի հասցեով:

Ամերիկյան խորհուրդների գրասենյակ, Իմպերիում պլազա բիզնես կենտրոն, 5րդ հարկ, Ամիրյան 4/7 փող., Երեւան 0010 հեռ. 54 40 15; 54 40 12; 56 00 45 կայք՝ www.americancouncils.am